

18
ՄԱՅԻՍԻ
2022



**ԲԻԶՆԵՍԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ
ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ**

**ԲԻԶՆԵՍԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
 ՀՀ-ՈՒՄ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	1
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	4
2.1. ԱԱՀ հետաձգում	5
2.1.1. Արտոնության իրավական շրջանակը.....	5
2.1.2. Արտոնության կիրառման արդյունքները.....	6
2.1.3. Մոնիթորինգ և հաշվետվողականություն.....	8
2.2. Մաքսատուրքի ազատում	9
2.2.1. Արտոնության իրավական շրջանակը.....	9
2.2.2. Արտոնության կիրառման արդյունքները.....	10
2.2.3. Մոնիթորինգ և հաշվետվողականություն.....	13
2.3. Աշխատատեղերի ստեղծման մասով շահութահարկի նվազեցում	14
2.3.1. Արտոնության իրավական շրջանակը.....	14
2.3.2. Արտոնության կիրառման արդյունքները.....	15
2.4. Ամփոփում	16
3. ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ	17
3.1. Ազատ տնտեսական գոտիներ	17
3.1.1. Արտոնության իրավական շրջանակը.....	17
3.1.2. Արտոնության կիրառման արդյունքները.....	18
3.1.3. Մոնիթորինգ և հաշվետվողականություն.....	21
3.2. Արդյունաբերական գոտիներ	22
3.2.1. Արտոնության իրավական շրջանակը.....	22

- 3.2.2. Արտոնության կիրառման արդյունքները 22
- 3.3. Ամփոփում 23
- 4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24
- 4.1. Դիլիջան համայնքի և հարակից տարածքների արտոնությունները 25
 - 4.1.1. Արտոնության իրավական շրջանակը 25
 - 4.1.2. Արտոնության կիրառման արդյունքները 26
- 4.2. Սահմանամերձ բնակավայրերի արտոնությունները 28
 - 4.2.1. Արտոնության իրավական շրջանակը 28
 - 4.2.2. Արտոնության կիրառման արդյունքները 29
- 4.3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արտոնությունները 30
 - 4.3.1. Արտոնության իրավական շրջանակը 30
 - 4.3.2. Արտոնության կիրառման արդյունքները 30
 - 4.3.3. Մոնիթորինգ և հաշվետվողականություն 31
 - 4.3.4. Ամփոփում 32
- 5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 33
- 6. ՀԱՎԵԼՎԱԾ 36
 - 6.1. Հավելված 1 36

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԶ	Անհատ ձեռնարկատեր
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՏԳ	Ազատ տնտեսական գոտի
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԿԲ	Կենտրոնական բանկ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԲՏԱՆ	Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ՀՀ ԷՆ	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
ՀՀ ՎԿ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
ՀՀ ՏԿԵՆ	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի իշխանափոխությունից հետո ՀՀ նորաստեղծ կառավարությունը հայտարարեց «տնտեսական հեղափոխության» մեկնարկի մասին, որի առանցքային բաղադրատարրերից էր նաև հարկային և մաքսային արտոնությունների արդյունավետության և տրամադրման թափանցիկության գնահատումը, ոչ արդյունավետ արտոնությունների վերացումը և նոր, ավելի հասցեական և արդյունավետ արտոնությունների սահմանումը:

Հաճախ հայտարարվում էր, որ արտոնությունները նախկինում միշտ տրամադրվել են նույն ընկերություններին, ընկերությունների հաշվետվողականությունը ցածր է եղել, պետությունը հետամուտ չի եղել գնահատելու արտոնությունների արդյունավետությունը և արտոնություններ ստացած ընկերությունների պարտավորությունների կատարումը:

Վերոհիշյալ բարի նպատակներն իրականացնելու նոր կառավարության հանձնառությունը արտացոլվել է ՀՀ կառավարության ծրագրերում, ինչպես նաև «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում:

Սույն վերլուծության նպատակն է հանրությանը ներկայացնել ՀՀ-ում ներկայումս գործող բիզնեսի խրախուսման հիմնական հարկային և մաքսային արտոնությունները, վերջին տարիներին դրանց փոփոխությունները և առկայության դեպքում արդյունավետության և հաշվետվողականության բարձրացմանն ուղղված քայլերը:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում գոյություն ունեն մի շարք մոտեցումներ հարկային արտոնությունների վերաբերյալ՝

- չեն ողջունվում ոչ հասցեական, երկարաժամկետ, չգնահատված արտոնությունները, հատկապես՝ այլ կարևոր ծախսերի կրճատման հաշվին,
- առաջարկվում է արտոնություններ տրամադրել ավելի շատ աշխատատեղ ստեղծող, ավելի մեծ աշխատավարձ վճարող, անապահովների և գործազուրկների համար աշխատատեղ ստեղծող թիրախային ընկերություններին, ավելի շատ կենտրոնանալ փոքր և միջին ձեռնարկությունների խթանման վրա:

Այսպիսով, վերլուծությունը կատարվել է հետևյալ տրամաբանությամբ. հիմնական արտոնություններն առանձնացվել են խմբերի՝ ներդրումային ծրագրերի շրջանակում տրամադրվող, ազատ տնտեսական և արդյունաբերական գոտիներ, ոլորտային և տարածքային արտոնություններ:

Վերոհիշյալ խմբերի յուրաքանչյուր առանձին արտոնության մասով ներկայացվել է իրավիճակը, տրամադրված արտոնությունների վիճակագրությունը, կատարվել են համեմատություններ մինչև իշխանափոխությունը եղած տվյալների հետ: Այնուհետև ուսումնասիրվել է արտոնության արդյունավետության բարձրացմանն ուղղված՝ ՀՀ կառավարության քաղաքականությունը, այդ մասով միջազգային փորձը, ինչպես նաև, ըստ հնարավորության, ներկայացվել են արտոնություն ստացած ընկերությունների գործունեության արդյունքները:

Վերջում ամփոփվել են վերլուծության արդյունքները և կատարվել համապատասխան եզրակացություններ: Կարծում ենք, որ սույն աշխատանքը որոշակի լույս կսփռի տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկում վերջին տարիների զարգացումների վրա:

2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրճարվելու են հասցեականություն չունեցող կամ ոչ արդյունավետ հարկային արտոնությունները. դրանց կիրառումն ու արդյունավետության գնահատումն իրականացվելու է համալիր խթանների և միջոցառումների շրջանակներում¹:

Հարուկ ուշադրություն է դարձվելու արտահանման մեծ ներուժ ունեցող ոլորտներում ներդրումային ծրագրերի օժանդակությանը: Այդպիսի ներդրումային ծրագրերն աջակցվելու են... օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային խթանիչ պայմաններ ստեղծելու ճանապարհով²:

Նախքան կոնկրետ արտոնությունների առանձնահատկություններին անդրադառնալը, հարկ ենք համարում համառոտ ներկայացնել հարկային և մաքսային արտոնությունների տրամադրման միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումները: Այսպես, լավագույն փորձի համաձայն.

- ✓ **Արտոնությունները կամ խթանման ծրագրերը հստակ պետք է կապված լինեն տվյալ ոլորտի կամ ընդհանուր տնտեսության զարգացման ռազմավարությունից բխող քաղաքականությունների նպատակներին³:**
Արդյունավետ չէ, երբ արտոնությունները ընդհանուր են և տրամադրվում են բոլոր ընկերություններին: Քաղաքականության նպատակներին համապատասխանությունը կարևոր է նաև մոնիթորինգի և գնահատման տեսակետից, ինչը հնարավորություն կտա համեմատել արդյունքները սահմանված նպատակի հետ:
- ✓ Հարկային արտոնությունները պետք է հստակ սահմանված լինեն համապատասխան օրենքում և չպետք է բանակցվեն յուրաքանչյուր առանձին ներդրումային ծրագրի համար: **Արտոնություն ստանալու գործընթացը, իր հերթին, պետք է լինի պարզ, հստակ և հնարավորության դեպքում՝ ինքնաշխատ,** այսինքն՝ առանց առանձին բարդ գործընթացների և պետական մարմիններ այցելությունների:
- ✓ **Արտոնությունները պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով ներդրողների շարժառիթները,** հասկանալու համար՝ արդյո՞ք այդ արտոնությունները կազդեն նրանց ներդրում կատարելու ցանկության վրա⁴:

¹ ՀՀ կառավարության ծրագիր, 2021-2026թթ., ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշում:

² ՀՀ կառավարության ծրագիր, 2019թ., ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշում:

³ Biggs, P. 2007, "Tax Incentives to Attract FDI, Paper presented at the Meeting of Experts on FDI, Technology and Competitiveness", UNCTAD, Palais des Nations, Geneva.

⁴ Ներդրումային խթաններ. համախմբված զեկույց. Հայաստան, ՀԲ, 2018:

- ✓ Տրամադրված արտոնությունների մասով պետք է սահմանվեն ոչ միայն մոնիթորինգ, այլև գնահատման մեխանիզմներ: Գնահատումն անհրաժեշտ է հասկանալու համար դրանց արդյունավետության աստիճանը, ինչպես նաև, թե որքանով են դրանք ծառայում նախանշված նպատակների իրականացմանը: Բացի այդ, **պետք է ստեղծվի բոլոր արտոնությունների տվյալների բազա, որտեղ կներառվեն համապատասխան օրենսդրության, արտոնությունների տրամադրման կարգի, պեղական մարմինների իրավասությունների, գնահատման չափանիշների, արտոնություն ստացած ընկերությունների, իրենց պարտավորությունների, ինչպես նաև այդ պարտավորությունների կատարման վերաբերյալ թափանցիկ տեղեկություններ:** Այս տվյալների բազան պետք է **հասանելի լինի հանրությանը**, իսկ դրա հրապարակման և թարմացման պահանջը՝ օրենքով ամրագրված:

Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի շրջանակում տրամադրվող հարկային և մաքսային հիմնական արտոնություններն են՝

- ✓ ԱԱՀ հետաձգում, որը սահմանված է ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1225-Ն որոշմամբ,
- ✓ մաքսատուրքի ազատում՝ սահմանված ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշմամբ,
- ✓ նոր աշխատատեղերի ստեղծման մասով շահութահարկի նվազեցում՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1235-Ն որոշման:

2.1. ԱԱՀ հետաձգում

2.1.1. Արտոնության իրավական շրջանակը

Համաձայն այս արտոնության՝ ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքում ապրանքների ներմուծման (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծման) դեպքում՝ մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը կարող է հետաձգվել երեք տարի ժամկետով: Արտոնությունը ստանալու համար ընկերությունները ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (ԷՆ) են ներկայացնում ներդրումային ծրագիր, որը գնահատվում է և բավարար շեմն անցնելու դեպքում հաստատվում ՀՀ կառավարության որոշմամբ: Այնուհետև ԷՆ-ի և ընկերության միջև կնքվում է պայմանագիր:

Ներդրումային ծրագիրը գնահատվում է համաձայն հետևյալ չափորոշիչների՝

- ✓ տնտեսության վրա մուլտիպլիկատիվ ազդեցություն,
- ✓ զբաղվածության ընդլայնում,
- ✓ նորարարություն և արտադրողականության բարձրացում,
- ✓ արտահանման ուղղվածություն,
- ✓ ծրագրի իրականացման շրջանակներում տրվող միջին աշխատավարձ,
- ✓ անձի համապատասխանությունը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դասակարգմանը:

Հարկ է նշել, որ այս արտոնությունը 2022թ. հունվարի 1-ից այլևս չի գործում. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածը ուժը կորցրած է ճանաչվել, իսկ արտոնության ենթակա ապրանքախմբերից շատերի համար սահմանին ներմուծման ժամանակ ԱԱՀ վճարելու պահանջը հանվել է:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ ընթացքում գտնվող արտոնությունները դեռ շարունակվում են, անհրաժեշտ է անդրադառնալ այս արտոնության տրամադրման որոշ առանձնահատկությունների, համեմատել մինչև իշխանափոխությունը և դրանից հետո իրականացված քայլերը:

2.1.2. Արտոնության կիրառման արդյունքները

Արտոնության սահմանման ժամանակից՝ 2009-ից ի վեր արտոնություն է տրամադրվել 156 ընկերությունների, որից 109-ը՝ մինչև իշխանափոխությունը և 47-ը՝ իշխանափոխությունից հետո:

Արտոնության արդյունավետությունը հնարավոր չէ գնահատել, քանի որ առկա չեն արտոնություն ստացած ընկերությունների ներդրումային ծրագրերի վերաբերյալ տվյալները: Ներդրումային ծրագրերի հիմնական ցուցանիշների և դրանց կատարողականի վերաբերյալ մեր հարցմանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրվել են միայն արտոնություն ստացած ընկերությունների անվանումները և կառավարության որոշումների ամսաթվերը՝ **պատճառաբանելով, որ ծրագրերի մանրամասները և կատարողական տվյալները առևտրային գաղտնիք են**, իսկ ներդրումային տվյալների համար ուղղորդելով՝ www.arlis.am իրավական տեղեկատվական համակարգ:

Սակայն նշված կայքում, ինչպես նաև ՀՀ կառավարության պաշտոնական կայքում հրապարակված որոշումներում առկա չէ որևէ տեղեկատվություն ներդրումային ծրագրերի վերաբերյալ: Որոշակի ոչ ամբողջական տվյալներ ներդրումային ծրագրերի մասին առկա են կառավարության նիստերի

օրակարգերում (նախատեսվող ներդրումները և ստեղծվելիք աշխատատեղերը), սակայն անգամ օրակարգերի արխիվում ամենահին տեղեկատվությունը 2018թ. հոկտեմբերի 25-ի նիստի օրակարգն է:

Հարկ է նշել նաև, որ արտոնության համար ներկայացված ծրագրերի նախագծերում երբեմն բաց կարգով, առանց սահմանափակման ներկայացվում են տարբեր տվյալներ (օրինակ՝ «ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍԻԼ» ՍՊԸ (կառավարության 04.03.2021 N 314-Ա որոշում), **ծրագրի նախագծում, բացի ներդրումներից և ստեղծվող աշխատատեղերից, նշվում են նաև արտադրանքի ծավալը, իրացումը, արտահանումը**): Սակայն, անհասկանալի պատճառաբանությամբ այլ ծրագրերի համար այդ տվյալները ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից համարվում են գաղտնի: Նույնը, մաքսատուրքի արտոնության մասով, որի որոշումների նախագծերում ծրագրերի մասին ավելի շատ տեղեկատվություն է ներառված:

Ինչևէ, օգտվելով բոլոր հնարավոր աղբյուրներից, սույն ուսումնասիրության շրջանակներում կազմվել է 2018-2021թթ. ԱԱՀ հետաձգման արտոնություն ստացած ընկերությունների ցանկը (Հավելված 1): Ցանկում ներառված են նախատեսվող ներդրումները, աշխատատեղերը, ներմուծվող ապրանքների արժեքը և հետաձգման ենթակա գումարները:

Վերջին չորս տարիների ընթացքում ԱԱՀ արտոնություն է ստացել 51 ծրագիր: Այդ ծրագրերի շրջանակում ընկերությունները խոստացել են իրականացնել շուրջ 800 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ և ստեղծել մոտ 4000 նոր աշխատատեղ:

Տվյալների ուսումնասիրությունը նույնպես ապացուցում է ներդրումային ծրագրերի առնվազն հիմնական ցուցանիշների մասով թափանցիկության անհրաժեշտությունը: **Հայտարարված ներդրումների ծավալները տարակուսանքի առիթ են տալիս:** Այսպես, օրինակ, **նույն ընկերությունը մի ծրագրի շրջանակում 6 մլրդ ներդրումների դեպքում ստեղծում է 160 նոր աշխատատեղ, իսկ հաջորդ ծրագրի շրջանակում 5 մլրդ ներդրումներով՝ 15 աշխատատեղ:** Սա խոսում է այն մասին, որ **չկա հստակ հասկացություն, թե որն է ներդրումը**, ինչը կարող է թյուրիմացության մեջ գցել գործարարներին: Նույնիսկ, չունենալով ծրագրի մանրամասները, կարելի է եզրակացնել, որ ընկերության կողմից ստեղծվող աշխատատեղերը կա՛մ բազմապատիկ թանկանում են, կա՛մ թվերը իրատեսական չեն:

Աղյուսակ 1. ԱԱՀ հերածգման արտոնությունները, 2018-2022թթ.

Տարեթիվ	Ծրագիր	Ծրագրով նախատեսված ներմուծվող ապրանքների ընդհանուր գումար (ՀՀ դրամ)	Երկարածգման ենթակա ԱԱՀ գումար (ՀՀ դրամ)	Նախատեսվող ներդրումներ	Աշխատատեղեր
2018 ⁵	18	32,868,681,545	6,573,736,309	16,440,000,000	394
2019	13	50,958,612,081	10,191,722,416	222,769,945,000	1,729
2020	16	35,185,903,014	7,037,180,603	77,327,836,712	1,287
2021	4	46,137,847,429	9,227,569,486	52,205,647,429	145
Ընդամենը	51	165,151,044,069	33,030,208,814	368,743,429,141	3,555

Աղբյուր՝ ՀՀ ԷՆ տվյալների և ՀՀ կառավարության որոշումների հիման վրա աղյուսակը կազմել են հեղինակները

Հատկանշական է նաև, որ 2021թ. դեկտեմբերի 21-ի «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-383-Ն օրենքով հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել, այսինքն՝ արտոնությունը այլևս չի տրամադրվում: Սակայն **ՀՀ ԷՆ կայքում դեռևս տեղադրված է ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1225-Ն գործող որոշումը և «գովազդվում» է այս արտոնությունը:**

2.1.3. Մոնիթորինգ և հաշվետվողականություն

Որոշմամբ միաժամանակ սահմանված է նաև մոնիթորինգի և հաշվետվողականության մեխանիզմ, համաձայն որի՝ ընկերությունները պարտավոր են ներկայացնել ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություններ: Հաշվետվություններում արտացոլված տվյալները լիազոր մարմինը համեմատում է ծրագրով ստանձնած պարտավորությունների հետ և շեղումներ հայտնաբերելու դեպքում կազմակերպություններից պահանջում է այդ շեղումների վերաբերյալ հիմնավորումներ: Այնուհետև ծրագիրը գնահատած պետական մարմինները որոշում են կայացնում պայմանագիրը լուծելու վերաբերյալ՝ համապատասխան իրավական հիմքերի առկայության դեպքում:

⁵ Հարկ է նշել, որ 2018թ. մի շարք ծրագրերի մատուց ներդրումների և աշխատատեղերի տվյալները հասանելի չեն:

Ինչպես նշվել էր, ԷՆ-ը չի հրապարակում և չի տրամադրում ընկերությունների ներդրումային ծրագրերի մոնիթորինգի և կառավարողականի արդյունքները: Հարկ է նշել, որ **նման ոչ թափանցիկ մոտեցումը նախ՝ չի համապատասխանում միջազգային լավագույն պրակտիկաներին** և որոշակի հարցերի առիթ է տալիս: Երկրորդ՝ **հասարակությունն իրավունք ունի իմանալ իր կողմից վճարված հարկերից տրվող արտոնությունների պայմանները, ընկերությունների ներկայացրած ծրագրերի իրականացման արդյունքները և այլն**, առավել ևս, որ ընկերությունների կողմից պարբերական հաշվետվություններ տրամադրելը օրենսդրական պահանջ է:

2.2. Մաքսատուրքի ազատում

2.2.1. Արտոնության իրավական շրջանակը

Համաձայն այս արտոնության՝ ընկերությունները ներդրումային ծրագրերի շրջանակում կարող են ազատվել ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների և հումքի մաքսատուրքի վճարումից: Արտոնությունը Հայաստանում գործում է 2015-ից, սակայն հարկ է նշել, որ այն հիմնված է ԵԱՏՄ օրենսդրության վրա և այս հնարավորությունը ընձեռնվել է ԵԱՏՄ-ին⁶ միանալուց հետո:

Արտոնության հիմքը դեռևս Մաքսային միության հանձնաժողովի⁷ 27.11.2009թ. N 130 որոշման 7.1.11-րդ ենթակետի դրույթներն են, որոնք հետագայում խմբագրվել են Եվրասիական միության հանձնաժողովի խորհրդի 21.12.2016թ. որոշմամբ: Հենց այս իրավական ակտով են սահմանված արտոնություն ստանալու հիմնական նախապայմանները, իսկ տեղական օրենսդրությամբ (այս դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ) կրկնվում են նախապայմանները և սահմանվում են ընթացակարգերը: Վերջիններս սահմանված են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշմամբ:

Այսպիսով, համաձայն ԵԱՏՄ և ՀՀ օրենսդրության, արտոնություն ստանալու հիմնական նախապայմաններն են.

- ✓ Արտոնությունը տրամադրվում է միայն ներդրումային ծրագրի շրջանակում, որը պետք է իրականացվի կառավարության կողմից սահմանված գերակա ոլորտում:
- ✓ Ներդրումային ծրագիրը պետք է հաստատվի կառավարության կողմից:

⁶ ԵԱՏՄ անդամ երկրներն են՝ Բելառուսը, Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը և Ռուսաստանի Դաշնությունը:

⁷ ՌԴ, Ղազախստանի և Բելառուսի միջև Մաքսային միություն:

- ✓ Ներմուծվող հումքը և տեխնոլոգիական սարքավորումները չեն արտադրվում ԵԱՏՄ անդամ երկրներում (կամ արտադրվում են ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ բավարար քանակով), կամ ԵԱՏՄ անդամ երկրներում արտադրվող նմանատիպ ապրանքները չեն համապատասխանում ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին:
- ✓ Ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները և հումքը պետք է օգտագործվեն նպատակային և բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում:

Այս նախապայմաններին ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 625-Ն որոշման խմբագրությամբ **ավելացել է ևս մեկը՝** գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող հումքի և (կամ) նյութերի համար մաքսատուրքի արտոնությունը տրվում է, **եթե դրանցից պատրաստված արտադրանքի առնվազն 80 տոկոսն արտահանվելու է Հայաստանի Հանրապետությունից:**

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1118-Ն որոշմամբ թվարկվում են նաև գերակա ոլորտները՝ ըստ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանի հավելվածով սահմանված տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝

- գյուղատնտեսություն (դասակարգչի կոդ A բաժնի խումբ 01,02,03).
- արդյունաբերություն (դասակարգչի կոդ B բաժին, C բաժին).
- զբոսաշրջություն (դասակարգչի կոդ I բաժնի խումբ 55 և R բաժնի 93.11, 93.21 ենթախմբերը).
- տրանսպորտ, տեղեկատվություն (բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաներ) և կապ (դասակարգչի կոդ H (բացառությամբ տաքսու ծառայությունների և միկրոավտոբուսներով ուղևորափոխադրումների) և J (բացառությամբ 63.9 կոդի).
- էներգետիկա (դասակարգչի կոդ D).
- առողջապահություն (դասակարգչի կոդ Q բաժնի խումբ 86):

2.2.2. Արտոնության կիրառման արդյունքները

Արտոնության սահմանման ժամանակից՝ 2015 թվականից ի վեր արտոնությունը տրամադրվել է 247 անգամ՝ որից 62-ը մինչև իշխանափոխությունը և 185-ը՝ իշխանափոխությունից հետո: Հատկանշական է, որ ինչպես ԱԱՀ

հետաձգման արտոնության մասով, այնպես էլ այստեղ **իշխանափոխությունից հետո հայտարարված ներդրումները, մեղմ ասած, այնքան էլ իրատեսական չեն թվում:** 2018-2020թթ. այս ծրագրերի շրջանակում հայտարարված ներդրումները կազմում են տարեկան միջին հաշվով 400-450 մլն ԱՄՆ դոլար:

ԱԱՀ և մաքսատուրքի արտոնությունների տրամադրման տվյալների համեմատական ուսումնասիրությունը ամրապնդում է վերոհիշյալ ենթադրությունը:

Առկա են ընկերություններ, որոնք նույն ներդրումային ծրագրի իրականացման շրջանակում ստացել են և՛ ԱԱՀ, և՛ մաքսատուրքի արտոնություն, սակայն չգիտես ինչու ներդրումների մասով խոստումները նույն ծրագրերի շրջանակում տարբերվում են: Օրինակ, «Ռ. ԶԱՔԱՐՅԱՆ» ՍՊԸ-ն մաքսատուրքի արտոնություն ստանալուց նշել է 1,030,113,767 դրամի ներդրում, իսկ ԱԱՀ հետաձգման մասով՝ 1,420,000,000 դրամ, «ՌՈՅԱԼ ԳԼԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն՝ 800,000,000 և 990,000,000 դրամ, «ՌԻԲԵԿ» ՍՊԸ-ն՝ 480,000,000 և 650,000,000 դրամ **համապատասխանաբար:** Հատկանշական է, որ ԱԱՀ արտոնության դեպքում ներդրումները միշտ ավելի շատ են հայտարարվել:

Սակայն ամենահետաքրքիրը «ԱՐՄՏԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ⁸ դեպքն է, երբ ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 16-ի նիստին, նույն օրը, նույն ծրագրի շրջանակում, նույն նախարարի կողմից ներկայացվող նիստի օրակարգի իրար հաջորդող 8-րդ և 9-րդ հարցերում **ստեղծվելիք աշխատատեղերի քանակը մի նախագծում նշված է 15, մյուսում՝ 35:** Համանման օրինակները բազմաթիվ են:

Նման իրավիճակում ինչպես արտոնության արդյունավետության, այնպես էլ կատարողականի գնահատումը դառնում է ոչ իրատեսական:

Աղյուսակ 2. Մաքսատուրքից ազատման արդյունությունը, 2015-2022թթ.

Տարեթիվ	Ծրագրեր	Արդյունություն ստանալու համար ներկայացված սարքավորումների և հումքի արժեքը (ՀՀ դրամ)	Տրամադրվող արդյունություն (ՀՀ դրամ)	ՀՀ պետական բյուջե մաքսատուրքից մուտքերի մասնաբաժին ԵԱՏՄ-ից (1.19%/1.22%)	Նախատեսվող ներդրումներ (մլն ԱՄՆ դոլար)	Աշխատատեղեր
2015	3	9,387,346,800	203,745,600	2,261,576	46	215
2016	11	12,410,016,221	600,640,564	6,667,110	52	1,806
2017	38	41,230,482,104	2,886,232,132	35,212,032	492	3,082
2018	43	190,477,069,798	16,471,593,928	200,953,446	404	3,283

⁸ <https://www.e-gov.am/sessions/archive/2020/04/16/>

2019	57	182,813,804,380	14,826,329,908	180,881,225	443	3,260
2020	55	153,301,497,990	12,730,292,706	155,309,571	422	2,074
2021	27	65,599,259,778	7,061,361,286	86,148,608	160	661
2022	13	51,160,600,000	6,353,300,000	77,510,260	93	318
Ընդամենը	247	706,380,077,071	61,133,496,124	744,943,828	2,112	14,699

Աղբյուր՝ ՀՀ ԷՆ տվյալների և կառավարության որոշումների հիման վրա աղյուսակը կազմել են հեղինակները

Որոշ առումով այս արտոնությունը կարելի է համարել Հայաստանում գործողներից ամենաարդյունավետը, քանի որ այն միակն է, որն իրականում ուղղակի մեծ բեռ չի հանդիսանում մեր պետական բյուջեի համար: Ինչպես նշել էինք, այս արտոնությունը ԵԱՏՄ կարգավորումների հիման վրա է սահմանվել, իսկ մաքսատուրքերը, ինչպես հայտնի է, ԵԱՏՄ շրջանակում հավաքվում են կենտրոնացված, հետագայում՝ ըստ համապատասխան չափաբաժինների, բաժանվում երկրների միջև:

Ներկայումս գործում են Եվրասիական միության բարձրագույն խորհրդի կողմից 2019թ. հոկտեմբերի 1-ի նիստին⁹ համաձայնեցված ներմուծման մաքսատուրքերի բաշխման հետևյալ մասնաբաժինները՝ Հայաստանի Հանրապետություն՝ 1.220%, Բելառուսի Հանրապետություն՝ 4.860%, Ղազախստանի Հանրապետություն՝ 6.955%, Ղրղզստանի Հանրապետություն՝ 1.900%, Ռուսաստանի Դաշնություն՝ 85.065%:

Այսինքն, մեծ հաշվով, արտոնության կիրառումից ՀՀ պետական բյուջեի վնասները մինիմալ են, իսկ օգուտները՝ էական: Այսպես, 2015-ից առ այսօր տրամադրված արտոնության ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 61 մլրդ դրամ, սակայն բյուջե մուտք չի գործել այդ գումարի ընդամենը շուրջ 700 մլն դրամը:

Այս դեպքում էլ ՀՀ նոր կառավարությունը ոչ այնքան ռացիոնալ վարքագիծ է դրսևորել: Այն իր որոշումներով սահմանափակել է արտոնությունից օգտվել կարողացող ընկերությունների շրջանակը: 2021 թվականի ապրիլին մտցվել է պահանջ, որ ներմուծվող հումքի մաքսատուրքի արտոնությունը տրվում է, եթե դրանցից պատրաստված արտադրանքի առնվազն 80 տոկոսն արտահանվելու է Հայաստանի Հանրապետությունից, ինչպես նաև որոշակի չափով սահմանափակվել է գերակա համարվող ոլորտների ցանկը: Այսինքն՝ **ԵԱՏՄ օրենսդրությամբ ավելի քիչ սահմանափակումներ են սահմանված, քան ՀՀ-ի,**

⁹ <http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/02-10-2019-5.aspx>

ինչը նվազեցնում է տեղական բիզնեսի այս գործիքից օգտվելու հնարավորությունը:

Միաժամանակ, հասկանալի չէ նման սահմանափակում սահմանելու տրամաբանությունը: Անգամ ՀՀ կառավարության որոշման **նախագծի հիմնավորման մեջ¹⁰ ոչինչ չի ասվում այդ դրույթի սահմանման նպատակահարմարության մասին:** Հասկանալի չէ նաև **առնվազն 80 տոկոս և ոչ պակաս, օրինակ՝ 50 տոկոս արտահանելու պահանջը**, որի վերաբերյալ նույնպես հիմնավորում առկա չէ:

Հարկ է նշել, որ ԵԱՏՄ շրջանակում **միակ պետությունը, որը տարիներ շարունակ ցանկացել և ցանկանում է որոշակիորեն սահմանափակել արտոնության կիրառությունը, եղել է ՌԴ-ն¹¹** (որպես մաքսատուրքի առյուծի բաժինը ստացող երկիր): Անգամ երկար տարիներ մշակվել և հետագայում շրջանառվել է գործընթացը կարգավորող և տարբեր առումներով սահմանափակող ԵԱՏՄ որոշում¹², որը, սակայն, ԵԱՏՄ այլ երկրների, հատկապես Բելառուսի ջանքերով ուժի մեջ չի մտել:

2.2.3. Մոնիթորինգ և հաշվետվողականություն

Արտոնության շրջանակում սահմանված է նաև մոնիթորինգի և հաշվետվողականության մեխանիզմ, համաձայն որի՝ արտոնություն ստացած անձը լիազոր մարմին է ներկայացնում կիսամյակային և տարեկան հաշվետվություններ:

Հաշվետվություններում արտացոլված տվյալները (իրականացված ներդրումներ, ստեղծված աշխատատեղեր, արտադրանքի, իրացման և արտահանման ծավալներ և այլն) լիազոր մարմինը ամփոփում և ներկայացնում է հայտի վերաբերյալ դիրքորոշում հայտնած մարմիններին: Մարմինները տվյալները ուսումնասիրելուց հետո ներկայացնում են դիրքորոշում արտոնության տրամադրումը շարունակելու կամ դադարեցնելու մասին:

Արտոնությունը դադարեցնելու հիմքերի առկայության դեպքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, արտոնության տրամադրման մասին որոշումն ուժը կորցրած է ճանաչվում:

¹⁰ <https://www.e-gov.am/sessions/archive/2021/04/22/>

¹¹ <https://www.garant.ru/consult/nalog/1524677/>

¹² <http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ttr/Documents/%D0%9F%D1%80%D0%BE%D0%B5%D0%BA%D1%82%20%D1%80%D0%B5%D1%88%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F%20130.pdf>

Ինչպես ԱԱՀ հետաձգման արտոնության, այնպես էլ այս դեպքում ՀՀ ԷՆ-ը **չի հրապարակում և չի տրամադրում ընկերությունների ներդրումային ծրագրերի մոնիթորինգի արդյունքների մասին տեղեկատվությունը:**

Այսպիսի մոտեցումը միջազգային պրակտիկայում համարվում է ռիսկեր պարունակող և ոչ թափանցիկ: ՀՀ ԷՆ-ի այն պնդումը, որ կատարողականի տեղեկատվությունը առևտրային գաղտնիք է, **չի համապատասխանում ՀՀ օրենսդրության դրույթներին:** Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղեկատվությունը առևտրային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

Օրինակ, իրականացված ներդրումների և ստեղծված աշխատատեղերի մասով տեղեկատվությունը չի կարող լինել առևտրային գաղտնիք, քանի որ դրանք ի սկզբանե հայտարարվում են ընկերությունների կողմից և արտացոլվում ՀՀ կառավարության որոշումների նախագծերում (այսինքն՝ առնվազն չեն գործում երրորդ անձանց անհայտ լինելու և գաղտնիության պահպանման սկզբունքները), և ենթադրվում է, որ ընկերությունները կատարելու են խոստացածը: **Այս դեպքում իրական պատկերը չներկայացնելը ենթադրաբար կարող է նշանակել միայն, որ պետական մարմինը թաքցնելու բան ունի:**

2.3. Աշխատատեղերի ստեղծման մասով շահութահարկի նվազեցում

2.3.1. Արտոնության իրավական շրջանակը

Այս արտոնությունը ստանալու համար ընկերությունները նույնպես ՀՀ ԷՆ ներկայացնում են գործարար ծրագիր, որը գնահատվում է և բավարար շեմը (26 և ավելի միավոր) անցնելու դեպքում հաստատվում ՀՀ կառավարության որոշմամբ:

Համաձայն այս արտոնության՝ գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող հինգ հարկային տարվա շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր¹³ աշխատատեղերի մասով՝ համապատասխան տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան

¹³ Նոր աշխատատեղերի թիվ է համարվում արտոնության տրամադրման հարկային տարվա աշխատողների միջին տարեկան թվի և ծրագրի մեկնարկին նախորդող հարկային տարվա աշխատողների միջին տարեկան թվի դրական տարբերությունը:

համապատասխան հարկային տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 30 տոկոսը:

Ծրագիրը գնահատվում է համաձայն հետևյալ չափորոշիչների՝

- ✓ տնտեսության վրա մուլտիպլիկատիվ ազդեցություն,
- ✓ զբաղվածության ընդլայնում և ոլորտի միջին աշխատավարձի չափ,
- ✓ նորարարություն և աշխատանքի արտադրողականության բարձրացում,
- ✓ արտահանման ուղղվածություն,
- ✓ պատշաճ մարքեթինգային քաղաքականություն,
- ✓ համաֆինանսավորման առկայություն (սեփականատիրոջ մասնակցությունը նախագծին՝ 50 և ավելի տոկոսով):

2.3.2. Արտոնության կիրառման արդյունքները

Այս արտոնությունը սահմանվել է 2017թ. վերջում՝ գործարար համայնքի հետ քննարկումների արդյունքում: Սակայն, ցավոք, 2018թ. և հետագայում այս արտոնությունից այդպես էլ ոչ մի ընկերություն չի օգտվել: Սա կարող է բացատրվել կա՛մ տնտեսական իրավիճակի փոփոխությամբ, կա՛մ ընթացակարգերի բարդությամբ, կա՛մ նոր ստեղծվող աշխատատեղերի արտոնության ծախսերի՝ օգուտներից ավելի լինելով:

Վերջինս անուղղակիորեն խոսում է այն մասին, որ նոր ստեղծվող աշխատատեղերի հայտարարված ծավալները նույնպես իրատեսական չեն, հակառակ դեպքում ընկերությունները շահագրգռված կլինեին ԱԱՀ և մաքսատուրքի արտոնությունները ստանալու հետ միաժամանակ օգտվել նաև այս արտոնությունից:

Ինչևիցե, արտոնությունից ոչ ոք չի օգտվում, բայց ՀՀ կառավարությունը քայլեր չի ձեռնարկում այն ավելի գրավիչ դարձնելու կամ ուղղակի չեղարկելու ուղղությամբ:

Այս ամենն այն դեպքում, երբ Համաշխարհային բանկի փորձագետները նույնպես, խորհուրդ են տվել ՀՀ կառավարությանը ֆիսկալ արտոնությունների արդյունավետությունը բարձրացնելու համար իրականացնել հետևյալ քայլերը՝

- ✓ բարելավել խթանների համապատասխանեցումը քաղաքականության նպատակներին և արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ-ներին,
- ✓ բարձրացնել թափանցիկությունը և ստեղծել խթանների համապարփակ տվյալների բազա,

- ✓ բարելավել խթանների իրավական շրջանակի հստակությունը,
- ✓ ապահովել ինստիտուցիոնալ դերերի համաձայնեցումը խթանների կառավարման և ղեկավարման գործընթացներում,
- ✓ բարձրացնել խթանների արդյունավետությունը՝ կանոնավոր մշտադիտարկում և գնահատում իրականացնելու միջոցով¹⁴:

2.4. Ամփոփում

Այսպիսով, ՀՀ-ում գործող հարկային և մաքսային հիմնական արտոնությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին **այս ոլորտում որևիցե էական փոփոխություն չի կատարվել**: Նոր կառավարությունը նույնությամբ կրկնում է նախկինում սահմանված արտոնությունները: Բացառություն է կազմում ԱԱՀ հետաձգման արտոնության վերացումը՝ որոշակի ապրանքատեսակների սահմանին ներմուծման ԱԱՀ-ից ազատման միջոցով, որի գործընթացը սկսել էր նախկինում:

Միաժամանակ, արտոնությունների տրամադրման գործընթացը, հատկապես կատարողական ցուցանիշների մասով, **թափանցիկ չէ և հանրության կողմից կառավարելի չէ**:

Մաքսատուրքի արտոնությունը, լինելով ամենաարդյունավետը, ՀՀ համար ավելի դժվարամատչելի է դարձել: Թե՛ ԱԱՀ հետաձգման, թե՛ մաքսատուրքի ազատման արտոնությունների համար **ներկայացված ներդրումային ծրագրերի հայտարարված ցուցանիշները իրատեսական չեն** (տե՛ս էջ 9, 12, 13): Ավելին, որոշ դեպքերում՝ ակնհայտորեն հորինված (օրինակ՝ «Արմտեքս Գրուպ» ՍՊԸ կամ «Ռիբեկ» ՍՊԸ ծրագրերը, էջ 13):

Ինչ վերաբերում է աշխատատեղերի արտոնությանը, ապա դրանից դեռևս ոչ մի ընկերություն չի օգտվել, միաժամանակ, կառավարությունը **քայլեր չի ձեռնարկել այն արդիականացնելու կամ ոչ արդյունավետ համարվելու դեպքում՝ վերացնելու ուղղությամբ**:

¹⁴ <https://www.mineconomy.am/media/5924/w.pdf>

3. ԱՉԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ

3.1. Ազատ տնտեսական գոտիներ

3.1.1. Արտոնության իրավական շրջանակը

Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական գոտիների (ԱՏԳ) ոլորտում հարաբերությունները կարգավորվում են 2010 թվականի հունիսի 18-ի «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ» համաձայնագրով և այլ միջազգային պայմանագրերով, Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրով և ազատ տնտեսական գոտիների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Վերջինս բաղկացած է 2011 թվականի մայիսի 25-ին ընդունված «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, մաքսային և հարկային հարաբերությունները կարգավորող օրենքներից և այլ իրավական ակտերից:

Ըստ այդ իրավական փաստաթղթերի՝ Հայաստանում ազատ տնտեսական գոտիների շահագործողներին տրամադրվող արտոնություններն են.

- ✓ Ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարումն ազատվում է ԱԱՀ-ից:
- ✓ Շահութահարկի վճարումից ազատվում են ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող շահութահարկ վճարողները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամտի մասով:
- ✓ Անշարժ գույքի հարկից ազատվում են ազատ տնտեսական գոտու տարածքում գտնվող ազատ տնտեսական գոտու շահագործողներին պատկանող կամ նրանց կողմից օգտագործվող հասարակական և արտադրական նշանակության շինությունները:
- ✓ Նախատեսվում են մաքսատուրքի արտոնություններ:
- ✓ Ազատ տնտեսական գոտում իրականացվող, ինչպես նաև ազատ տնտեսական գոտու շահագործողների և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերի) միջև կատարվող գործարքների գնանշումները կամ

անկանխիկ վճարումները կարող են իրականացվել նաև ազատ փոխարկելի արտարժույթով:

3.1.2. Արտոնության կիրառման արդյունքները

Ըստ օրենսդրության՝ Հայաստանում ազատ տնտեսական գոտիները կարող են ստեղծվել երկու ճանապարհով՝ ՀՀ կառավարության կամ մասնավոր նախաձեռնությամբ: Յուրաքանչյուր դեպքում էլ ազատ տնտեսական գոտին ստեղծվում է ՀՀ կառավարության որոշմամբ: Ազատ տնտեսական գոտուն ներկայացվող պահանջների ընդհանուր (առավելագույն) շրջանակը սահմանվում է օրենքով, սակայն, կախված ազատ տնտեսական գոտու առանձնահատկություններից, ազատ տնտեսական գոտին կարող է բավարարել միայն այդ չափանիշների մի մասին:

Ազատ տնտեսական գոտու ստեղծման և կազմակերպչի ընտրության մասին ՀՀ կառավարության որոշումն ընդունվելուց հետո լիազոր մարմինը (ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը) և կազմակերպիչը կնքում են պայմանագիր, որից հետո ԱՏԳ-ն գործարկվում է, այսինքն՝ դրանում թույլ է տրվում շահագործողների գործունեությունը:

Հայաստանում ազատ տնտեսական գոտիները սկսել են գործել 2013-ից: Մինչև այսօր ՀՀ կառավարության որոշումներով ստեղծվել է 5 ԱՏԳ, որոնցից ներկայումս փաստացի գործում է ընդամենը 2-ը: Հայաստանում հիմնադրված ԱՏԳ-ներն են.

- ✓ «ԱԼՅԱՆՍ» ԱՏԳ՝ ստեղծվել է 18.07.2013թ., մեկնարկը տրվել է 2013 թվականի օգոստոսի 1-ին:
- ✓ «ՄԵՐԻԴԻԱՆ» ԱՏԳ՝ ստեղծվել է 27.02.2014թ., մեկնարկը տրվել է 2015 թվականի մարտի 12-ին:
- ✓ «ՄԵՂՐԻ» ԱՏԳ՝ ստեղծվել է 07.12.2017թ., մեկնարկը տրվել է 2017 թվականի դեկտեմբերի 15-ին:
- ✓ «ԷԿՈՍ» ԱՏԳ՝ ստեղծվել է 30.08.2018թ., մեկնարկը տրվել է 2019 թվականի հունվարի 21-ին:
- ✓ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԼՈԳԻՍՏԻԿ ՊԱՐԿ» ԱՏԳ՝ ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 29-ի, N 1412-Ն որոշմամբ¹⁵ ստեղծվել է, սակայն չի մեկնարկել:

¹⁵ <https://www.e-gov.am/gov-decrees/item/32721/>

«ԱԼՅԱՆՍ» ԱՏԳ

«Ալյանս» ԱՏԳ-ն ստեղծվել է «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքներում, կազմակերպիչն է «Սիտրոնիկս Արմենիա» ՓԲԸ-ն: Կազմակերպչի կողմից հայտարարվել էր 6 մլն ԱՄՆ դոլարի ներդրում և 10 աշխատատեղերի ստեղծում: «Ալյանսում» գործունեություն է իրականացվում բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների և Հայաստանում չարտադրվող ապրանքատեսակների ոլորտներում:

Մեկնարկից մինչև այսօր «Ալյանսում» գործունեություն իրականացնելու համար թույլտվություն է ստացել 21 շահագործող: Ներկայումս գործունեություն է իրականացնում 9 շահագործող¹⁶: **Հարկ է նշել, որ իշխանափոխությունից առաջ շահագործող է դարձել 15 ընկերություն, իսկ հետո՝ 6-ը:**

«ՄԵՐԻԴԻԱՆ» ԱՏԳ

«Մերիդիան» ԱՏԳ-ի կազմակերպիչն է «Մերիդիան ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ն: Կազմակերպչի կողմից հայտարարվել էր 14 մլն ԱՄՆ դոլարի ներդրում և 40 աշխատատեղերի ստեղծում: Մերիդիան ԱՏԳ գործունեության ոլորտներն են՝ ոսկերչությունը, ակնագործությունը (ադամանդագործությունը) և ժամագործությունը: Մեկնարկից մինչև այսօր Մերիդիանում գործունեություն իրականացնելու համար թույլտվություն է ստացել 8 շահագործող: **Ներկայումս ազատ տնտեսական գոտում ոչ մի շահագործող առկա չէ, այսինքն՝ փաստացիորեն գոտին չի գործում:**

Համաձայն «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ազատ տնտեսական գոտու շահագործող է համարվում շահագործողների ռեեստրում ներառված կազմակերպությունը: ՀՀ ԷՆ կայքում վարվող ռեեստրում տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործող ներառված չէ¹⁷:

«ՄԵՂՐԻ» ԱՏԳ

«Մեղրի» ԱՏԳ-ն կառավարության կողմից ստեղծված միակ ազատ տնտեսական գոտին է: Այն ստեղծվել է ԵԱՏՄ Մաքսային օրենսգրքի 455-րդ հոդվածի հիմքով¹⁸, և այստեղ չկան գործունեության տեսակների սահմանափակումներ (բացառությամբ օրենքով արգելվածների): ԱՏԳ-ի կազմակերպիչն է պետության կողմից հիմնադրված «ՄԵՂՐԻ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ

¹⁶ <https://mineconomy.am/page/361>

¹⁷ <https://mineconomy.am/page/361>

¹⁸ Այն ԱՏԳ-ները, որոնց սահմաններն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են ԵԱՏՄ մաքսային սահմանի հատվածների հետ համեմատած այլ ԱՏԳ-ների, ունեն որոշակի առանձնահատկություններ:

ԳՈՏԻ» ՓԲԸ-ն: Կազմակերպչի կողմից հայտարարվել էր 45 աշխատատեղերի ստեղծում: Ներկայումս ազատ տնտեսական գոտում փաստացի աշխատող ոչ մի շահագործող առկա չէ¹⁹:

Հարկ է նշել, որ գոտին հիմնվել է, կառուցվել է ենթակառուցվածքը, մեկնարկել է գործունեությունը, անգամ գոտում գործունեություն իրականացնելու համար թույլտվություն է ստացել 2 շահագործող: Այդուհանդերձ, գոտին անհասկանալի պատճառներով չի սկսել գործել, և, հետևաբար, թույլտվություն ստացած ընկերությունները ֆիզիկապես այդ տարածքներում չեն աշխատում²⁰: **Այլ կերպ ասած՝ գոտին փաստացիորեն չի գործում:**

ԱՏԳ հիմնման և զարգացման աշխատանքները համակարգող երկու աշխատանքային խումբ է ստեղծվել («Վարչապետի 23.08.2017թ. N 937-Ա և 20.09.2018թ. N 1248-Ա որոշումներ»)՝ մեկը իշխանափոխությունից առաջ, մյուսը՝ հետո: Իշխանափոխությունից առաջ ստեղծված աշխատանքային խմբի **4 ամսվա գործունեության արդյունքում հիմնվել և կառուցվել է ԱՏԳ-ն և դրա ենթակառուցվածքը**, իսկ իշխանափոխությունից հետո ստեղծված աշխատանքային խմբի **գործունեության 4 տարիների ընթացքում զարգացումներ չեն գրանցվել:**

«ԷԿՈՍ» ԱՏԳ

«ԷԿՈՍ» ԱՏԳ-ի կազմակերպիչն է «ԷԿՈՍ» ՓԲԸ-ն: ԱՏԳ գործունեության ոլորտներն են՝ բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաները: Ազատ տնտեսական գոտու կազմակերպչի կողմից նախատեսվում է ստեղծել մինչև 22 նոր աշխատատեղ: ԱՏԳ կազմակերպչի կողմից մինչև 2043թ.-ը նախատեսվում է ներդնել 3 մլն ԱՄՆ դոլար:

Մեկնարկից մինչև այսօր «ԷԿՈՍ» ԱՏԳ-ում գործունեություն իրականացնելու համար թույլտվություն է ստացել 11 շահագործող: Ներկայումս գործունեություն է իրականացնում 11 շահագործող²¹:

«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԼՈԳԻՍՏԻԿ ՊԱՐԿ» ԱՏԳ

«ԵԼՊ» ԱՏԳ կազմակերպիչն է ճանաչվել «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԼՈԳԻՍՏԻԿ ՊԱՐԿ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻ» ՍՊԸ-ն: ԱՏԳ գործունեության ոլորտները բավական լայն են՝ սկսած տարբեր տեսակի արտադրություններից, վերջացրած բեռնափոխադրումներով և ֆինանսական ու տեղեկատվական ծառայություններով: Ստեղծման ընդհանուր գաղափարն էր Հայաստան ներգրավել Amazon-ի նման

¹⁹ <https://mineconomy.am/page/361>

²⁰ Մի շահագործողը չսկսելով գործունեությունը հեռացել է, <https://mineconomy.am/page/361>

²¹ <https://mineconomy.am/page/361>

հանրահայտ լոգիստիկական ընկերություններ և այստեղից իրականացնել բեռնափոխադրումները: Գոտին նախատեսվում էր կառուցել Գյումրի քաղաքում:

Համաձայն ներդրումային ծրագրի՝ ընկերությունը նախատեսում էր ստեղծել մինչև 200-230 աշխատատեղ և կատարել շուրջ 130 մլն ԱՄՆ դոլարի ներդրում հիմնական միջոցներում:

Կազմակերպիչը կանխատեսում էր ԱՏԳ շահագործողների միջոցով Հայաստան ներգրավել շուրջ 540 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, ստեղծել շուրջ 13000 նոր աշխատատեղեր, ինչի արդյունքում կգեներացվեր լրացուցիչ շուրջ 1 մլրդ ԱՄՆ դոլարի ՀՆԱ: Ընկերությունը նաև փոխըմբռնման հուշագիր էր ստորագրել Գյումրու քաղաքապետարանի հետ²²:

Սակայն, ԱՏԳ ստեղծման մասին ՀՀ կառավարության որոշումը ընդունելուց հետո անհայտ պատճառներով ազատ տնտեսական գոտու գործունեությունը այդպես էլ չի մեկնարկել: Համաձայն «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ մասի՝ կառավարության անունից լիազոր մարմինը ԱՏԳ կազմակերպչի հետ պետք է կնքի պայմանագիր, որն Օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն պետք է հրապարակվի լիազոր մարմնի կայքում:

Համաձայն ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 29-ի N 1412-Ն որոշման 5-րդ կետի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարը պետք է մինչև 2021 թվականի մայիսի 31-ը կնքեր պայմանագիր ԱՏԳ կազմակերպչի՝ «Եվրասիական լոգիստիկ պարկ ազատ տնտեսական գոտի» ՍՊԸ հետ: Սակայն ՀՀ ԷՆ կայքում նման պայմանագիր հրապարակված չէ: Միաժամանակ, վերոհիշյալ որոշմամբ սահմանված ԱՏԳ տարածքների (Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղի թիվ 17) ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այնտեղ ազատ տնտեսական գոտի չի կառուցվել և չի կառուցվում: **Այսինքն՝ որոշումը ընդունվել է, սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքվել,** գոտու գործունեությունը չի մեկնարկել, որոշումը չեղյալ չի ճանաչվել և տվյալ դեպքում **արձանագրվել է օրենքի ակնհայտ խախտում:**

3.1.3. Մոնիթորինգ և հաշվետվողականություն

Համաձայն Օրենքի՝ շահագործողները ներկայացնում են սկզբնական և հերթական տարեկան հայտարարագրեր, իսկ կազմակերպիչները՝ տարեկան հաշվետվություններ: Հայտարարագրերը ներառում են տեղեկատվություն ներդրումների, աշխատատեղերի, արտադրանքի ծավալների և այլն վերաբերյալ:

²² <https://hetq.am/hy/article/106824>

Տվյալ տարվա հերթական և սկզբնական հայտարարագրերի ցուցանիշների միջև առնվազն 20% բացասական շեղման և 3-ամսյա ժամկետում շեղումը չվերացնելու կամ շեղումը վերացնելու մասին տեղեկատվություն չներկայացնելու դեպքերում շահագործողը հանվում է ռեեստրից:

Ինչպես հարկային և մաքսային արտոնությունների դեպքում, այնպես էլ հայկական ազատ տնտեսական գոտիների կազմակերպիչների և շահագործողների գործունեության կատարողականի և արդյունքների մասին տեղեկատվության տրամադրման խնդրանքին ՀՀ ԷՆ կողմից ստացվել է մերժում, տրամադրվել է միայն ներկայումս գրանցված շահագործողների քանակը:

Ցավոք, վերոհիշյալ տվյալների բացակայությունը թույլ չի տալիս թվային գնահատումներ իրականացնել, հատկապես՝ վերջին տարիներին ԱՏԳ գործունեության արդյունավետության վերաբերյալ:

3.2. Արդյունաբերական գոտիներ

3.2.1. Արտոնության իրավական շրջանակը

Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական գոտիների ոլորտում հարաբերությունները կարգավորվում են «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքով:

Համաձայն օրենքի՝ արդյունաբերական գոտիներում կարող են տրվել հետևյալ արտոնությունները և աջակցությունը՝

- ✓ շահութահարկի և եկամտային հարկի վճարման արտոնություն,
- ✓ գույքահարկի և հողի հարկի վճարման արտոնություն,
- ✓ ֆինանսական աջակցություն,
- ✓ խորհրդատվական աջակցություն:

Միաժամանակ, յուրաքանչյուր արդյունաբերական գոտու համար տրամադրվող արտոնությունների տեսակը, չափը և ձևը սահմանվում են օրենքով:

3.2.2. Արտոնության կիրառման արդյունքները

Ներկայումս Հայաստանում գործող արդյունաբերական գոտիներ առկա չեն:

ՀՀ նոր կառավարությունը խոստանում է, որ մինչև 2026թ. կստեղծվի 3 արդյունաբերական գոտի՝ Գյումրիում, Արարատում և Սյունիքում: Արարատի

արդյունաբերական գոտին նախատեսված է լինելու իրանական ընկերությունների, իսկ Գյումրիինը՝ ԵԱՏՄ-ի և եվրոպական երկրների համար²³: Սյունիքի արդյունաբերական գոտու մասին ՀՀ կառավարությունը ոչինչ չի հայտնում:

Այս գաղափարը, անկասկած, հրապուրիչ է, սակայն անհասկանալի է թե ինչու Գյումրիում վերոհիշյալ լոգիստիկ ազատ տնտեսական գոտու ստեղծումը սառեցվել է, Մեղրիում պետական միջոցների հաշվին կառուցված ազատ տնտեսական գոտին չի աշխատում, իսկ կառավարությունը ցանկանում է այլընտրանքային գոտիներ ստեղծել: Պետությունը կարիք չունի ինքն իր հետ մրցակցելու:

Ինչ վերաբերում է Արարատի մարզում իրանական ընկերությունների համար արդյունաբերական գոտու ստեղծմանը, ապա կարծում ենք, որ այդ համոզմունքը համապատասխան պաշտոնյաների մոտ իրանցիների հետ մեկ հանդիպման արդյունքում է ձևավորվել²⁴: Իրանցիների հետ համագործակցության ամենահարմար հարթակը արդեն իսկ ստեղծված է՝ «Մեղրի» ԱՏԳ-ն, որն ուղղակի պետք է աշխատացնել:

3.3. Ամփոփում

Այսպիսով, կարող ենք փաստել, որ **ստեղծված հինգ ազատ տնտեսական գոտիներից ներկայումս գործում է միայն երկուսը:**

«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԼՈԳԻՍՏԻԿ ՊԱՐԿ» ԱՏԳ-ն կառավարության որոշմամբ ստեղծվել է, սակայն 3 տարի է ոչ մի գործունեություն չի գրանցվել:

«ՄԵՐԻԴԻԱՆ» ԱՏԳ-ն փաստաթղթերով դեռևս գոյություն ունի, սակայն գոտում այլևս չկան շահագործողներ:

«ՄԵՂՐԻ» ԱՏԳ-ում աշխատելու համար մեկ շահագործող ստացել է թույլտվություն, սակայն արդեն 4 տարի է գոտին չի գործում: Թե ինչպես է աշխատելու շահագործողը, պարզ չէ:

«Այլանս» ԱՏԳ-ում իշխանափոխությունից հետո շահագործող է դարձել 6 ընկերություն, իսկ «ԷԿՈՍ» ԱՏԳ-ում՝ 11 ընկերություն:

²³ <https://www.1lurer.am/hy/2021/11/04/%D4%BF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D5%BE-%D5%B4%D5%AB%D5%B6%D5%B9%D6%87-2026%D5%A9-%D5%BA%D5%A5%D5%BF%D6%84-%D5%A7-%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%BE%D5%AB-%D5%A1%D6%80%D5%A4%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-3-%D5%A3%D5%B8%D5%BF%D5%AB/593723>

²⁴ https://finport.am/full_news.php?id=45054&lang=1

Գործող երկու ԱՏԳ-ների գործունեության արդյունքները հնարավոր չէ գնահատել համապատասխան տվյալների բացակայության պատճառով: Լիազոր պետական մարմինը հրաժարվում է տրամադրել իրականացված ներդրումների, ստեղծված աշխատատեղերի, արտադրության ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը:

Ինչ վերաբերում է արդյունաբերական գոտիներին, **ապա այդպիսիները Հայաստանում դեռևս ստեղծված չեն՝ չնայած նոր կառավարության բազմաթիվ խոստումներին:**

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասցեական հարկային քաղաքականությամբ... նպաստելու ենք Երևանից դուրս՝ հատկապես սահմանամերձ գոտիներում գործարար համայնքի կայացմանը: Ներդնելու ենք գոտիական հարկման այնպիսի համակարգ, որի պայմաններում կկիրառվեն ավելացված արժեքի հարկի, հողի հարկի արտոնություններ, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի փարբերակված սակագներ, ինչն էլ ՀՀ փարածքում կնպաստի սահմանամերձ համայնքներում աշխատատեղերի ստեղծման կամ շարունակական ավելացման ուղղված հասցեական ներդրումային ծրագրերի իրականացմանը²⁵:

Ոլորտային և տարածքային հիմնական արտոնություններն են՝

- ✓ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնությունները,
- ✓ «Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնությունները,
- ✓ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնությունները:

²⁵ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր:

4.1. Դիվիզան համայնքի և հարակից տարածքների արտոնությունները

4.1.1. Արտոնության իրավական շրջանակը

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիվիզան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» ՀՀ օրենքի՝ Դիվիզան համայնքի տարածքում իրականացվող ծրագրերը գնահատման նպատակով ներկայացվում են Դիվիզանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման մշտապես գործող խորհուրդ: Խորհուրդը կազմված է 9 անդամից, որի կազմը հաստատում է Դիվիզան համայնքի ավագանին: Այնուհետև նրանք կազմակերպության դեպքում հաստատվում է ՀՀ կառավարության կողմից:

Այդ ծրագրերի իրականացման շրջանակներում՝

- ✓ ապրանքների ներմուծումը (այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից) ազատվում է ավելացված արժեքի հարկից,
- ✓ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը ազատվում են ավելացված արժեքի հարկից,
- ✓ շահույթը՝ մինչև հարկումը, կամ դրա այն մասը, որը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը օգտագործվում է (ներդրվում է) ծրագրի շրջանակներում, ազատվում է շահութահարկից,
- ✓ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց վճարվող, գործող օրենսդրության համաձայն, հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներն ազատվում են ոչ ռեզիդենտի շահութահարկից,
- ✓ ֆիզիկական անձանցից անշարժ գույք ձեռք բերելու համար վճարվող եկամուտներն ազատվում են եկամտային հարկից:

Հարկ է նշել, որ Դիվիզան համայնքում գործում է նաև ծրագրային արտոնություն, որը տրամաբանական կապի մեջ է ուսումնասիրվող արտոնության հետ: Խոսքը «Դիվիզանի միջազգային դպրոց» ծրագրի շրջանակներում հարկային արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների մասին է: Այս արտոնության շրջանակում ծրագիրն իրականացնող կազմակերպություններն ազատվում են ԱԱՀ-ից, շահութահարկից, ոչ ռեզիդենտի շահութահարկից, ֆիզիկական անձանցից հող ձեռք բերելու համար եկամտային հարկից:

Հատկանշական է, որ արտոնության շրջանակում ՀՀ կառավարությունը որդեգրել էր մոտեցում, որի համաձայն՝ 2013 թվականի հունվարի 1-ից հետո մինչև օրենքի ուժի մեջ մտնելը (2013թ. հուլիսի 10) կատարված գործարքների ու գործառնությունների մասով պետք է կատարվեր հարկային և մաքսային վճարների

գծով պարտավորությունների վերահաշվարկ, և յուրաքանչյուր կազմակերպության կողմից հիշյալ գործարքների ու գործառնությունների մասով նախկինում վճարված հարկերի ու մաքսային վճարների գումարները պետք է ուղղվեին տվյալ կազմակերպության՝ ապագայում առաջացող հարկային պարտավորությունների մարմանը:

4.1.2. Արտոնության կիրառման արդյունքները

Այս արտոնությունը սահմանվել էր՝ հաշվի առնելով Դիլիջան համայնքի զբոսաշրջային-առողջարանային ներուժը, Դիլիջանի միջազգային դպրոցի, ինչպես նաև ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի առկայությունը: Ակնկալվում էր, որ այն կարող է բավական խոշոր ներդրումների ներգրավման խթան հանդիսանալ:

Սակայն առ այսօր արտոնությունից օգտվելու համար հավանություն է տրվել մեկ ծրագրի՝ «Դիլիջանի առողջարանային կենտրոնի ստեղծման և հասարակական ենթակառուցվածքների զարգացման ծրագրին», որը հաստատվել է ՀՀ կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 566-Ա որոշմամբ: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում էր հիմնել «Չաում Դիլիջան» առողջարանային կենտրոն, ձևափոխել քաղաքային լիճը և բարեկարգել լճի հարակից տարածքը, վերակառուցել քաղաքային մարզադաշտը և դրան հարակից քաղաքային զբոսայգու հատվածը: Ծրագրի իրականացման ժամկետը սահմանվել է 60 ամիս:

Աղյուսակ 3. Դիլիջան համայնքում արտոնության շրջանակներում իրականացվող ներդրումային ծրագիր

Ընկերության անվանում	Ծրագրի իրականացման ոլորտ	Կատարվելիք ներդրումներն ու ծրագրի արժեքը, հազ. դրամ	Փաստացի կատարված ներդրումները, հազ. դրամ
Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ (նախկին անվանումը՝ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» ԲՀ)	«Չաում Դիլիջան» կենտրոն	14,000,000	355,682
«Ասեթ Քոնթրոլ Քամփնի» ՓԲԸ			168,175

Ընկերության անվանում	Ծրագրի իրականացման ոլորտ	Կատարվելիք ներդրումներն ու ծրագրի արժեքը, հազ. դրամ	Փաստացի կատարված ներդրումները, հազ. դրամ
Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ (նախկին անվանումը՝ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» ԲՀ)	Քաղաքային զբոսայգու վերակառուցում	145,000	8,665
«ԴԻՍ Փրոֆերթիս» բարեգործական հիմնադրամ			105,089
«Դիլիջան Դեվելոպմենթ» հիմնադրամ			77,399
«ԴԻՍ Փրոֆերթիս» բարեգործական հիմնադրամ	Դիլիջանի մարզադաշտ	315,000	42,218
Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ (նախկին անվանումը՝ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» ԲՀ)			5,895
«ԴԻՍ Փրոֆերթիս» բարեգործական հիմնադրամ	Քաղաքային լճի և հարակից տարածքների բարեկարգում	670,000	116,770
«Դիլիջան Դեվելոպմենթ» հիմնադրամ			798
Ընդամենը		15,130,000	880,691

Աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ

Մեծ հաշվով, այս ծրագիրը ավելի շատ աջակցող և բարենպաստ միջավայր, ենթակառուցվածքներ ստեղծելու նպատակ է հետապնդում այլ ներդրումների համար: Սակայն, անհայտ պատճառներով, 2018 թվականից ի վեր ոչ մի այլ ներդրումային ծրագիր հավանության չի արժանացել և չի օգտվել օրենքով սահմանված արտոնություններից:

Ավելին, այս ծրագրի կատարման նկատմամբ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել է հսկողություն: Ծրագրի **փաստացի կատարված ներդրումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն իրականացման դեռևս սաղմնային փուլում է:** Սա այն դեպքում, երբ իրականացման ավարտի ժամկետին մնացել է ընդամենը շուրջ 13 ամիս:

4.2. Սահմանամերձ բնակավայրերի արտոնությունները

4.2.1. Արտոնության իրավական շրջանակը

Այս արտոնության շրջանակներին համապատասխան գործունեություն է համարվում ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 30 որոշմամբ սահմանված ցանկում²⁶ ներառված բնակավայրերի վարչական սահմաններում մանրածախ վաճառքի, արտադրության կազմակերպման և հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը:

Արտոնության շրջանակում՝

- ✓ մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի), ինչպես նաև հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից, իսկ շրջանառության հարկ վճարող անհատ ձեռնարկատերերն ազատվում են շահութահարկից.
- ✓ արտադրության (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝
 - ա. իրացումից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից,
 - բ. օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից,
 - գ. իրացումից ստացման ենթակա եկամուտներն ազատվում են շահութահարկից.
- ✓ կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում, որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից:

Այս արտոնությունը «ինքնաշխատ» տրամադրվող է, այսինքն՝ առանց հատուկ ընթացակարգերի, օրենքով սահմանված ոլորտներում աշխատող ընկերությունները և անհատ ձեռնարկատերերը կարող են օգտվել դրանից: Հաշվի առնելով այս հանգամանքը, այն կարևորվում է առաջին հերթին սահմանամերձ բնակավայրերում գործարար ակտիվության մակարդակը հասկանալու տեսակետից:

²⁶ Օրենքի իմաստով սահմանամերձ համարվող բնակավայրերի ցանկ: Սահմանված է ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 30 որոշմամբ:

4.2.2. Արտոնության կիրառման արդյունքները

2018-ից առ այսօր արտոնությունից օգտվել են 1261 անհատ ձեռնարկատեր և իրավաբանական անձ, որոնցից 2022թ. դրությամբ գործում է 837-ը:

Աղյուսակ 4. Արտոնված հարկերը սահմանամերձ բնակավայրերում 2018-2021թթ., դրամ

Տարեթիվ	2018	2019	2020	2021
Արտոնված արտոնագրային հարկի գումար	20 954 525	11 481 000	-	-
Արտոնված ԱԱՀ-ի գումար	21 163 861	18 829 792	6 344 418	7 373 009
Արտոնված շրջանառության հարկի գումար	85 462 594	119 685 675	93 671 301	113 547 500
Արտոնված շահութահարկի գումար	54 387 469	60 251 030	237 155 501	22 155 617
Ընդամենը	181 968 450	210 247 497	337 171 221	143 076 126

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

Համաձայն Աղյուսակ 4-ի տվյալների՝ **բոլոր առանձին արտոնված հարկերի մասով 2019-ից հետո արձանագրվում է նվազում**, ինչը ընդհանուր առմամբ համահունչ է թե՛ երկրի և թե՛ սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացման միտումներին:

Հարկ է նշել, որ 2020թ. շահութահարկի մասով կտրուկ աճը պայմանավորված է **մեկ ընկերության՝ «Տավուշ Տեքստիլի» գործունեությամբ**: Միայն այդ տարի ընկերության շահութահարկը կազմել է շուրջ 191 մլն դրամ, իսկ աշխատատեղերի քանակը՝ 775: Ճգնաժամային տարում այդպիսի ակտիվությունը հավանաբար պայմանավորված է ընկերության կողմից բացառիկ պահանջարկ ունեցող՝ **բժշկական դիմակների արտադրությամբ, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինների պատվերով**²⁷:

²⁷ <https://www.tert.am/am/news/2020/07/05/Tavush-textil/3336860>

Աղյուսակ 5. Աշխատողների միջին թվաքանակը, 2018-2021թթ.

Տարեթիվ	2018	2019	2020	2021
Աշխատողների միջին թվաքանակը	1,017	1,464	1,941	504

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

2020-2021թթ. նվազման միտումը դրսևորվել է նաև աշխատատեղերի մասով: **2021թ. արտոնություն ստացած կազմակերպություններում աշխատել է միջին հաշվով ընդամենը 501 մարդ:** Սահմանամերձ բնակավայրերից արտագաղթի ահազնացող տեմպերի պարագայում դա օրինաչափ է:

4.3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արտոնությունները

4.3.1. Արտոնության իրավական շրջանակը

Այս արտոնության շրջանակում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի օրենքով սահմանված կարգով հավաստագրված ստարտափները գործունեության առաջին հինգ տարիների ընթացքում ազատվում են շահութահարկից (0% դրույքաչափ), իսկ աշխատողների եկամտային հարկի դրույքաչափը սահմանվում է 10%:

Արտոնությունը կարող են ստանալ բացառապես օրենքով սահմանված գործունեության տեսակներ (SS ոլորտ) իրականացնող նոր ստեղծված ընկերությունները (ստարտափները), որոնց աշխատողների թիվը չի գերազանցում 30-ը: Միաժամանակ, այդ ընկերությունները, դրանց բաժնետերերից որևէ մեկը չպետք է հանդիսանան այլ գործող կամ լուծարված կամ հավաստագրված ընկերությունների բաժնետեր, ինչպես նաև դիմող ընկերությունների բաժնետերերի 20 և ավելի տոկոս բաժնեմասը չպետք է պատկանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի այլ կազմակերպության:

Հավաստագրումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ձևավորված հանձնաժողովը:

4.3.2. Արտոնության կիրառման արդյունքները

Այս արտոնության մասով հիմնական հասանելի տեղեկատվությունը ՀՀ ԲՏԱՆ-ի կայքում տեղադրված (https://hti.am/main.php?lang=1&page_id=718) հավաստագրված կազմակերպությունների ցանկն է: Տեղեկատվության մեկ այլ աղբյուր է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության

մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2019թ. նախագծի հիմնավորումը²⁸:

Ցանկի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2015թ.արտոնության սահմանումից ի վեր հավաստագրման համար դիմել է 1 185 ընկերություն, որից 35-ը մերժվել է:

Մինչև իշխանափոխությունը հավաստագրվել է 426 ընկերություն: 2015 թվականին ստեղծվել և հարկային արտոնություններից օգտվելու հավաստագիր են ստացել SS 59 ընկերություն, 2016 թվականին՝ 98, 2017 թվականին՝ 272: Ստեղծված նոր ընկերություններում ստեղծվել է մոտ 2 400 նոր աշխատատեղ՝ 3.0-3.4 մլն դրամ միջին տարեկան աշխատավարձով²⁹:

Այնուհետև արտոնության գործողության ժամկետը ավարտվել է: Այդ պատճառով 2018թ. և 2019թ. մինչև հունիս ամիսը հավաստագիր չի տրամադրվել: Արտոնության ժամկետի երկարաձգումից ի վեր՝ 2019թ. հունիս ամսից մինչև այսօր տրամադրվել է 724 հավաստագիր:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 399 - Լ որոշմամբ սահմանվել է նոր արտոնություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (ԱՁ) համար: Արտոնության շրջանակում ոլորտի կազմակերպությունները և ԱՁ-ները 2022 թվականի մարտի 1-ի դրությամբ հաշվառված աշխատողների թվաքանակի համեմատ առնվազն 10 նոր ստեղծված աշխատատեղերի մասով ստանում են պետական աջակցություն՝ նոր ընդունված աշխատողներին հաշվեգրված աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման դիմաց վճարված եկամուտներից պետական բյուջե վճարված եկամտային հարկի 50 տոկոսի չափով: Հաշվի առնելով, որ արտոնությունը բավական նոր է, դեռևս վաղ է անդրադառնալ դրա արդյունքներին և արդյունավետությանը:

4.3.3. Մոնիթորինգ և հաշվետվողականություն

Հավաստագրված կազմակերպությունները պարտավոր են ներկայացնել հավաստագրի գործողության ընթացքում ստացված արդյունքների, ինչպես նաև

²⁸ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10226&Reading=0>

²⁹ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10226&Reading=0>

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով այլ տեղեկությունների վերաբերյալ կիսամյակային հաշվետվություններ:

Հավաստագրված կազմակերպությունների գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մեր խնդրանքին ՀՀ ԲՏԱՆ-ը տրամադրել է միայն իր պաշտոնական կայքում տեղադրված հավաստագրված ընկերությունների ցանկի հղումը:

4.3.4. Ամփոփում

Այսպիսով, Դիլիջան համայնքում հարկային արտոնություն տրվել է միայն մեկ ծրագրի, որի շրջանակում 60-ամսյա ժամկետում պետք է իրականացվեր շուրջ 15 մլրդ դրամի ներդրում: Ս.թ. մարտի վերջի դրությամբ փաստացի իրականացվել է շուրջ 880 մլն դրամի ներդրում: Կարելի է եզրակացնել, որ նախկինում սկսած ծրագրի իրականացման նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացվում, ինչի պատճառով խոստացված ներդրումների և փաստացի կատարվածի միջև տարբերությունը զգալի է: Այս արտոնության շրջանակում վերջին 4 տարիների ընթացքում այլ ծրագրեր չեն հաստատվել:

Վերջին տարիներին շարունակվել է սահմանամերձ համայնքների հարկային արտոնությունների տրամադրումը: ՀՀ ՊԵԿ տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2020 և 2021թթ. սահմանամերձ գոտիներում գործարար ակտիվությունը կտրուկ նվազել է: 2021թ. արտոնված հարկերի գումարը կազմել է մոտ 143 մլն դրամ, իսկ ընկերությունների աշխատողների միջին թվաքանակը՝ 504, ինչը մոտ երկու անգամ ցածր է 2018թ. համապատասխան ցուցանիշից:

ՏՏ ոլորտի հարկային արտոնությունից իշխանափոխությունից հետո օգտվել է ավելի քան 720 ընկերություն, ինչը գերազանցում է մինչև իշխանափոխությունը եղած ցուցանիշը: Սակայն, այդ ընկերությունների գործունեության մասին տվյալների բացակայությունը թույլ չի տալիս գնահատել արտոնության արդյունավետությունը:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ նոր կառավարության խոստումների՝ պետք է կրճատվեն հասցեականություն չունեցող կամ ոչ արդյունավետ հարկային արտոնությունները, օժանդակվեն արտահանման մեծ ներուժ ունեցող ոլորտներում ներդրումային ծրագրերը՝ օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային խթանիչ պայմաններ ստեղծելու ճանապարհով:

Ներկայումս Հայաստանում գործող հարկային և մաքսային հիմնական արտոնությունների ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ վերոհիշյալը հերթական «բարի» նպատակներ էին, որոնց վիճակված չէր դառնալ իրականություն:

Այսպես, իշխանափոխությունից հետո անցած 4 տարիների ընթացքում արտոնությունների համակարգն էական փոփոխություններ չի կրել, չի զարգացել: Գործնականում շարունակվել է նույն տրամաբանությամբ և նույն ընթացակարգերով նախկինում սահմանված արտոնությունների տրամադրումը՝ չնայած տեղի ունեցած տնտեսական և աշխարհաքաղաքական լուրջ փոփոխություններին:

Խոստացված փոփոխությունները չեն իրականացվել առաջին հերթին նոր կառավարության տնտեսական քաղաքականության և տեսլականի, նպատակների և առաջնահերթությունների, ինչպես նաև վերջիններից բխող հստակ ռազմավարական և կոնկրետ միջոցառումների ծրագրերի բացակայության պատճառով:

Պատճառներից մեկն էլ արտոնություն ստացած ընկերությունների կողմից ներդրումային պարտավորությունների կատարման նկատմամբ ոչ պատշաճ վերահսկողությունն է, ինչը հանգեցնում է նաև ընկերությունների կողմից խոստումների ուժեղացմանը: Սա իր հերթին կարող է խոչընդոտել արտոնությունների արդյունավետության գնահատմանը:

Արտոնություններ տրամադրվել են գործնականում նույն ընթացակարգերով և հաճախ՝ այն ընկերություններին, որոնց տրամադրվել է նախկինում: Այսինքն՝ կոտրվում է այն թեզը, որ նախկինում հովանավորչություն էր, և արտոնություններ տրվում էին «ընտրյալ» կազմակերպություններին, իսկ ներկա իշխանությունները ավելի «արդար» են:

Միաժամանակ, գործընթացը հասարակության համար դարձել է ոչ թափանցիկ, պետական մարմինները շահագրգռված չեն հաշվետու լինելու: Այսպես, արտոնություն ստացած ընկերությունների գործունեության արդյունքների

վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մերժել են ԷՆ-ը և ԲՏԱՆ-ը, պատճառաբանելով, որ դրանք առևտրային գաղտնիք են, սակայն նմանօրինակ տեղեկատվություն տրամադրել են ՊԵԿ-ը և ՏԿԵՆ-ը : Այսինքն՝ թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանն ուղղված՝ համակարգված քայլեր չեն իրականացվում և թողնված են մարմինների հայեցողությանը: Թափանցիկության բարձրացման անհրաժեշտությունը արձանագրված է նաև միջազգային դոկոր կազմակերպությունների առաջարկություններում:

Անդրադառնալով առանձին արտոնություններին՝ հարկ է նշել, որ նոր պահանջների պատճառով մաքսատուրքի ազատման արտոնություն կարող են ստանալ ավելի քիչ ընկերություններ: Թե՛ ԱԱՀ հետաձգման, թե՛ մաքսատուրքի ազատման արտոնությունների համար ներկայացված ներդրումային ծրագրերի հայտարարված ցուցանիշները իրատեսական չեն:

Աշխատատեղերի արտոնությունից դեռևս ոչ մի ընկերություն չի օգտվել, իսկ կառավարությունը քայլեր չի ձեռնարկել այն արդիականացնելու կամ վերացնելու ուղղությամբ:

Հայաստանում ստեղծված հինգ ազատ տնտեսական գոտիներից ներկայումս գործում են միայն երկուսը: «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԼՈԳԻՍՏԻԿ ՊԱՐԿ» ԱՏԳ-ն կառավարության որոշմամբ հիմնվել է, սակայն չի գործում: «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ լիազոր մարմինը ԱՏԳ կազմակերպչի հետ պետք է կնքի պայմանագիր և այն հրապարակի իր կայքում, իսկ ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 29-ի N 1412-Ն որոշման համաձայն՝ պայմանագիրը պետք է կնքվեր մինչև 2021 թվականի մայիսի 31-ը: Պայմանագիրը կնքված և հրապարակված չէ, այսինքն՝ ԱՏԳ ստեղծման և հետագա ընթացքի մասով արձանագրվել է օրենքի խախտում:

«ՄԵՐԻԴԻԱՆ» ԱՏԳ-ն փաստաթղթերով գոյություն ունի, սակայն գոտում այլևս չկան շահագործողներ: «ՄԵՂՐԻ» ԱՏԳ-ի ենթակառուցվածքները ստեղծվել են, աշխատելու համար մեկ շահագործող ստացել է թույլտվություն, սակայն արդեն 4 տարի է այն չի գործում:

«Այլանս» ԱՏԳ-ում իշխանափոխությունից հետո շահագործող է դարձել 6 ընկերություն, իսկ «ԷԿՈՍ» ԱՏԳ-ում՝ 11 ընկերություն: Այս ԱՏԳ-ների գործունեության արդյունքները հնարավոր չէ գնահատել համապատասխան տվյալների բացակայության պատճառով: Լիազոր պետական մարմինը հրաժարվում է տրամադրել իրականացված ներդրումների, ստեղծված աշխատատեղերի, արտադրության ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը:

Արդյունաբերական գոտիներ նույնպես Հայաստանում դեռևս ստեղծված չեն: Կառավարությունը խոստանում է մինչև 2026թ. ստեղծել միանգամից 3-ը:

Դիլիջան համայնքում հարկային արտոնություն տրվել է միայն մեկ ծրագրի՝ 2018թ., որի շրջանակում փաստացի իրականացվել է ընդամենը շուրջ 900 մլն դրամի ներդրում՝ հայտարարված շուրջ 15 մլրդ դրամի փոխարեն:

Սահմանամերձ համայնքների հարկային արտոնությունների վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին նկատվում է ցուցանիշների անկման միտում, ինչը խոսում է այդ համայնքներում գործարար ակտիվության կտրուկ նվազման մասին: Օրինակ, 2021թ. արտոնված հարկերի գումարը կազմել է մոտ 143 մլն դրամ, իսկ ընկերությունների աշխատողների միջին թվաքանակը՝ 504, ինչը մոտ երկու անգամ ցածր է 2018թ. համապատասխան ցուցանիշից:

SS ոլորտի հարկային արտոնությունից իշխանափոխությունից հետո օգտվել է ավելի շատ ընկերություն, քան նախկինում, սակայն վերջիններիս գործունեության վերաբերյալ տվյալներ հասանելի չեն:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ ՀՀ նոր կառավարության կողմից հարկային և մաքսային արտոնությունների տրամադրման ոլորտում խոստացված բարեփոխումները չեն իրականացվել, համակարգը չի արդիականացվել, արդյունավետությունը չի գնահատվել և բարձրացվել, նոր խթաններ չեն ստեղծվել, իսկ նախկինում գործողները հաճախ սառեցվել են, սակայն փաստացի օրենսդրորեն չեն վերացվել կամ փոփոխվել:

6. ՀԱՎԵԼՎԱԾ

6.1. Հավելված 1

ԱԱՀ հեղաձգման արդյունություն ստացած ընկերությունները, 2018-2021թթ.

N	Ընկերության անվանումը	ՀՀ կառավարության որոշում	Ծրագրով նախատեսված ներմուծվող ապրանքների ընդհանուր գումար (ՀՀ դրամ)	Հեղաձգման ենթակա ԱԱՀ գումար (ՀՀ դրամ)	Նախատեսվող ներդրումներ	Աշխատատեղեր
2018						
1	«Վանսևան»	15.02.2018, N 149-Ա	31,515,000	6,303,000		
2	«ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ»	12.04.2018, N 462-Ա	8,146,459,000	1,629,291,800	2,100,000,000	74
3	«ԱՆԻԹԵՔՍ»	12.04.2018, N 468-Ա	8,654,831,000	1,730,966,200		
4	«Պրոֆպանել»	03.05.2018, N 520-Ա	697,860,000	139,572,000		
5	«Արարատի գինու գործարան»	08.06.2018, N 653-Ա	860,000,000	172,000,000		
6	«ՎԱԲԱ»	21.06.2018, N 703-Ա	102,935,000	20,587,000		
7	«Գրին ֆարմեր»	26.07.2018, N 828-Ա	630,000,000	126,000,000		
8	«Սաթենկար»	26.07.2018, N 832-Ա	286,500,000	57,300,000		
9	«Լենտեքս»	02.08.2018, N 869-Ա	1,985,700,000	397,140,000		
10	«Հելլո»	02.08.2018, N 888-Ա	322,788,000	64,557,600		
11	«ՍԱՀԼԵՎՍ»	09.08.2018, N 882-Ա	850,000,000	170,000,000		
12	«Արման ընդ Պարտնյորս»	30.08.2018, N 964-Ա	244,083,156	48,816,631		
13	«Ռադ Սանե Վաշամիր Գրուպ»	06.09.2018, N 983-Ա	1,100,000,000	220,000,000		
14	«Սևանի շաքարի գործարան»	04.10.2018, N 1086-Ա	3,709,440,000	741,888,000		
15	«ԱՐԳԱ-ՅՈՒՐՈՍԹԻԼ»	25.10.2018, N 1201-Ա	322,882,500	64,576,500	680,000,000	25
16	«Ռոյալ Գլաս Գրուպ»	15.11.2018, N 1313-Ա	484,000,000	96,800,000	990,000,000	25
17	«ԱՐՄԵՆԻԱ Էյրվեյզ» ավիաընկերություն	22.11.2018, N 1326-Ա	178,103,889	35,620,778	6,670,000,000	110
18	«Արթիկի ՓՀԿ»	06.12.2018, N 1390-Ա	4,261,584,000	852,316,800	6,000,000,000	160

N	Ընկերության անվանումը	ՀՀ կառավարության որոշում	Ծրագրով նախատեսված ներմուծվող ապրանքների ընդհանուր գումար (ՀՀ դրամ)	Հեղաձգման ենթակա ԱԱՀ գումար (ՀՀ դրամ)	Նախատեսվող ներդրումներ	Աշխատատեղեր
Ընդամենը 2018			32,868,681,545	6,573,736,309	16,440,000,000	394
2019						
19	«Ռ. Զաքարյան»	24.01.2019, N 34-Ա	1,420,279,572	284,055,914	1,420,000,000	58
20	«ՌԻԲԵԿ»	7.03.2019, N 203-Ա	506,590,000	101,318,000	650,000,000	50
21	«ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ»	14.03.2019, N 217-Ա	115,055,120	23,011,024	13,200,000,000	141
22	«Արմտեքս Գրուպ»	14.03.2019, N 241-Ա	450,000,000	90,000,000	601,000,000	40
23	«Մանուկյան կոնյակի գործարան»	02.05.2019, N 515-Ա	273,383,600	54,676,720	2,800,000,000	37
24	«ԷֆԱրՎի Մասրիկ»	16.05.2019, N 588-Ա	885,980,960	177,196,192	28,000,000,000	10
25	«Պարկ Գրուպ»	23.05.2019, N 606-Ա	4,941,216,000	988,243,200	7,500,000,000	350
26	«Մոնֆֆ գրուպ»	30.05.2019, N 665-Ա	14,491,272,158	2,898,254,432	14,700,000,000	100
27	«Գրանտ»	30.05.2019, N 674-Ա	26,700,000,000	5,340,000,000	26,700,000,000	90
28	«Արմփաուեր» ՓԲԸ	12.09.2019, N 1231-Ա	26,000,695	5,200,139	124,000,000,000	810
29	«Սիլ Մաազա» ՍՊԸ	24.10.2019, N 1483-Ա	82,432,000	16,486,400	118,945,000	17
30	«ՊՐՈՅԵԿՏ ԻՆՏԵՐ-ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	14.11.2019, N 1595-Ա	1,060,000,000	212,000,000	2,500,000,000	205-215
31	«ԱՐՄՖԻԼՏՐ» ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ	19.12.2019, N 1893-Ա	6,401,976	1,280,395	580,000,000	26
Ընդամենը 2019			50,958,612,081	10,191,722,416	222,769,945,000	1,729
2020						
32	«ՍԱՀԼԵՎԱ» ՍՊԸ	27.02.2020, N 218-Ա	170,000,000	34,000,000	170,000,000	30
33	«ՍՎԵՏ-ՏԵՔՍ» ՍՊԸ	26.03.2020, N 402-Ա	2,509,421,000	501,884,200	3,229,421,000	240
34	«ԱՐՄՏԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	16.04.2020, N 579-Ա	754,500,000	150,900,000	1,000,000,000	35
35	«ՄԻՇԵԼ ՍԵՐՂԱՆԻ» ԱԶ	02.04.2020, N 489-Ա	8,475,735	1,695,147	165,000,000	15

N	Ընկերության անվանումը	ՀՀ կառավարության որոշում	Ծրագրով նախատեսված ներմուծվող ապրանքների ընդհանուր գումար (ՀՀ դրամ)	Հեփաձգման ենթակա ԱԱՀ գումար (ՀՀ դրամ)	Նախատեսվող ներդրումներ	Աշխատատեղեր
36	«ԱՐԹԻԿԻ ՓՀԿ» ՍՊԸ	09.04.2020, N 529-Ա	4,330,000,000	866,000,000	5,000,000,000	15
37	«Ռ. ԶԱՔԱՐՅԱՆ» ՍՊԸ	23.04.2020, N 625-Ա	2,491,917,700	498,383,540	2,500,000,000	26
38	«ԳՐԻՆ ՖԱՐՄԵՐ» ՍՊԸ	14.05.2020, N 757-Ա	161,503,800	32,300,760	950,000,000	40
39	«Չերամիզիա Ինթերնեշնլ» ՍՊԸ	21.05.2020, N 787-Ա	759,000,000	151,800,000	759,000,000	162
40	«ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	18.06.2020, N 985-Ա	218,250,000	43,650,000	1,900,000,000	5
41	«Եղվարդի համակցված կերերի գործարան» ՍՊԸ	20.08.2020, N 1383-Ա	2,191,414,000	438,282,800	5,000,000,000	185
42	«ՄՇԵՐ ԳԱՍԻԱ» ՍՊԸ	20.08.2020, N 1378-Ա	11,885,000	2,377,000	11,885,000	30
43	«ԲԱԱՄ ՎԵՆՏՉՐ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ	10.09.2020, N 1501-Ա	242,530,712	48,506,142	242,530,712	35
44	«ԱՐՄՅԱՆՍԿԻ ՈՒՐՈՄԱՅ» ՍՊԸ	07.10.2020, N 1649-Ա	2,436,200,000	487,240,000	11,000,000,000	129
45	«ԱՆԻԹԵՔՍ» ՍՊԸ	30.11.2020, N 1904-Ա	2,966,986,950	593,397,390	3,000,000,000	110
46	«ԱՐ. ՏՈՐԱԿՈ» ՓԲԸ	24.12.2020, N 2147-Ա	15,458,818,117	3,091,763,623	40,600,000,000	160
47	«ՌՈՋ ՖԻԼՊ» ՍՊԸ	18.11.2020, N 1807-Ա	475,000,000	95,000,000	1,800,000,000	70
Ընդամենը 2020			35,185,903,014	7,037,180,603	77,327,836,712	1,287
2021						
48	«ԷՅ ԲԻ ՍԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ	04.03.2021, N 314-Ա	4,005,647,429	801,129,486	4,005,647,429	76
49	«ԱԱ ՏՐԱՆՉԻՏ» ՍՊԸ	04.03.2021, N 295-Ա	41,600,000,000	8,320,000,000	41,900,000,000	45
50	«ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍՊԸ	20.05.2021, N 810-Ա	278,200,000	55,640,000	4,700,000,000	20
51	«Ա-Ս ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	03.06.2021, N 907-Ա	254,000,000	50,800,000	1,600,000,000	4
Ընդամենը 2021			46,137,847,429	9,227,569,486	52,205,647,429	145
Ընդամենը 2018-2021			165,151,044,069	33,030,208,814	368,743,429,141	3,555

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: